



## ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՅԻՆ ԵՎ «ԱՐՄԱՏ ՀԱԽԱՏՈՅ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

(Գրախոսության փոխարքեն)

Վենետիկում լույս տեսավ Հայուստանի ավագագոյն պատմաբնակից մևսի՝ բազմավաստակ հայրածու և ներհուն մատենագիտ Հ. Ս. Անասյանի «Վարդան Այգեկյին իր նորահայր երկերի լույսի տակ» աշխատությունը\*, որը արժեքավոր ներդրում է նայ միջնադարյան մատենագրության պատմության համար: Սույն գործը արդյունք է հեղինակի կատարած երկարամյա ձեռագրագիտական տքնաշան աշխատանքների. Այն լիսու կարելու նպատակ է բերում Վարդան Այգեկյուն ժառանգության ամրութացման, ինչպես նաև մեծ մասամբ անհայտ մնացած նրա կենսագրության լրացման ողղությամբ: Միաժամանակ նոր նյութեր է տալիս հայ դավանաբանական գրականության պատմության համար:

Անասյանը հայտնաբերում է Վարդան վարդապետ Այգեկյուն գրչին պատկանող երեք երկեր: Դրանցից առաջինը, որն ամբողջական մի աշխատություն է և կրում է «Գիրք հաստատութեան և արմատ հաստոց» խորագիրը, ափարտվել է 1205 թվականին: Այն բարկացած է 16 գլուխներից և ընդգրկում է երեսու հիմնական մասեր, որոնք նվիրված են դավանաբանական և ծիսական հարցերին: Թեև այս գործը իր ժամանակին հայտնի է եղել ներհուն բանամեր Կարապետ եպիսկոպոս Կանոնադատ Անդրանիկ Անդրանիկի կողմէ:

\* Հակոբ Ս. Անասյան, «Վարդան Այգեկյին իր նորահայր երկերի լույսի տակ: Բնագիրներ. Վասն աշխարհա բաժրաստղաց ներկեցուոց Հայուստանեաց, Վասն շատանաց բնողացն յանդիմանություն: Արտառապահած Բազմաթիվ-ի 1908, թ. 7—12 բացառիկէն, Վանասիկ-Ս. Դավար, 1969:

իայն նու պատկերացում չեր ունեցել, որ այդ երկը Վարդան Այգեկյուն հեղինակությունն է: Այդինչ Անասյանը սույն աշխատության տարրեր գրչագրերի հայտնաբերման և համանառնան շնորհիլ և նորահայտ հիշատակարանների լույսի տակ անվիճելիորեն կարողացել է ապացուցել, որ «Արմատ հաստոց» երկի հեղինակը Վարդան Այգեկյին է: Եթե Երևանի Մաշտոցյան Մատենադարանի № 3295 ձեռագրից (էջ 338ա) կամ նրան նմանվող գրչագրերից հայտնի էր, որ առանց մականվան մի ոմն Վարդան էր հիշվում իրը նրա հեղինակ, —մի անորոշ տվյալ, որի պատճառավ, ինչպես նշեցինք, Կ. եպիսկոպոս Տեր-Մկրտչյանին անձանութ էր մնացել այդ գրքի հեղինակային պատկանելիությունը, —ապա Անասյանը Մատենադարանի № 8356 նորահայր ձեռագրի օգնությամբ, որը Վարդան Այգեկյուն գործերի մի ժողովածու է և արտագրվել է նրա հմբանագիր օրինակից 1322 թ. Կամրիկ անապատում, կարողացավ պարզել, որ այդ ձեռագրում եղող §§ 14—20 բնագրերը նույն են «Արմատ հաստոց»-ի Ժ—ԺԶ գլուխների մետք, հետևաբար Այգեկյին է նաև «Արմատ հաստոց»-ի հեղինակը: № 8356 թանկագին գրչագրի նույնքան թանկագին հիշատակա-

<sup>1</sup> «Կնիք հաստոց ընդհանուր սուրբ եկեղեցւոյ յողղափառ և սուրբ Բոգնեկիր նարցն մերոց դասանութեանց, յաւորս Կոմիտաս Կաթողիկոսի համամատաքնակ: Հրատարակութիւն Կարապետ եպիսկոպոսի», Էջմիածին, 1914, տևս առաջարանը էջ CX—CXIX:

<sup>2</sup> Հակոբ Ս. Անասյան, գրախոսությունը աշխատությունը, էջ 14:

բաններում երկը տեղ նշվում է Վարդան ա-  
նոնը իր ծննդավայր Մարտօնի անունով՝  
իրեն Մարտօնացի<sup>3</sup>, մի մականուն, որով  
հայտնի է եղել նա մինչև իր Ազգեկուս հաս-  
տառվելը: Նշնչք, որ սույն աշխատության  
մեջնակի պատկանելիության հարցում, Ա-  
նասիանը դեռև լվաղուց է, որ ճշշտ կողմնու-  
րոշում է ունեցել: Իր «Հայկական Մատենա-  
գիտություն» հոյակապ աշխատության Ա-  
նատորի գանձագան էշերուն նա արդեն  
հայտնել էր այս կարծիքը, թե ինչիք երկը  
Վարդան Ազգեկուս մեղյանակությունն է<sup>4</sup>: Որ-  
պես մեկը նայ հակարաղիկեղոնական պայ-  
քարի ուսումնափրության աղբյուրներից՝  
Վարդան Ազգեկուս նորանայտ այս ծովա-  
լուն աշխատության արժեքը շատ մեծ է:  
Միջնադարում հակարաղիկեղոնական պայ-  
քարը հայերի համար դարձել է մարտունան  
և ավելի ճիշտ՝ լինել թե շինելու պայքար:  
Խնչակն իրենց հայրենիքում, այնպես էլ հայ-  
կական գաղղավայրերում դարեր շարունակ  
հայերը ծգուել են կամքի գնով կառչած  
մնալ հայրենական հնավանդ սովորություններին և  
ներսարար, մեծ գոհողությունների  
գնով, նրանք կարողացել են հակարարված  
տալ բյուզանդական խարդավանքներին, ո-  
րոնց նպատակն է եղել հայերին դավանա-  
փոխ անելու միջոցով ձուլման ենթարկել նը-  
րանց: Ավելի քան հազարամյա իրենց այս  
գոտենարտի ընթացքում բազմահնուս և լո-  
ւասիտ հայ վարդապետները բյուզանդական-  
քաղկեդոնական ունձգությունների և հայե-  
րի մասին տարածվող զրպարտությունների  
դեմ կարողացել են ստեղծել իրենց գաղա-  
փարական գեներերը: Անա և հայերի այդ  
գոյամարտը ծնննու է տվել դավանարանա-  
կան չափազանց հարուստ մի գրականու-  
թյան, որը, սակայն, դժբախտարար, ցարդ  
անհրաժեշտ չափով չի ուսումնասիրիլած հայ  
բանասիրության կողմից, իսկ բազմաթիվ  
արհավիրքներից մազանործ ազատված մի  
շարք կարևոր երկեր դեռևս շարունակվուն  
են մնալ անտիպ և անձանոթ:

<sup>3</sup> Տես Մաշտոցան Մատենադարանի № 8356 ձև-  
ուագրի 110ա, 150թ—181ա, և 142ա էջերը:

<sup>4</sup> Հ. Ս. Անազան, Հայկական մատենագիտություն  
Ե—ԺԸ դր., Երևան, 1959, էջեր 78. (տող 27—35),  
358 (տող 14), 487 (տող 18), 490 (տող 42), 782  
(տող 7), 1084, (տող 27), 1043, (տող 25), և այլն:  
«Հայկական մատենագիտություն»-ից մետք 1960 թ.  
Նորայր Խորենի. Ծովականը (Պողարյան) ևս գրել է,  
որ «Արման հասատը մողովածուի Անդիմակը Վար-  
դան Ազգեկուս է, թեև բնագրական-համեմատական  
ապացույցներ չի ընդունել» (Նորայր Խոհիսկ. Ծովական,  
Վարդան վարդապետ «Հայատարմատ»-ը, «Միոն»,  
Երևան, 1960, էջ 104—106):

### ՅԱԿՈԲ Ս. ԱՆԱԶԱՆ

(Հայաստանի Գյուղական գոտության վահանակից)

### ՎԱՐԴԱՆ ԱՇԳԵՐԻ ԼՈՅՈՒ ՏԱԿ

ՆՈՐԱՅՈՒԹ ԵՐԿԵՐԻ ԼՈՅՈՒ ՏԱԿ

#### ԽՆԱԳԻՐՆԵՐ

ՎԱՐԴԱՆ ԲԱՄԲԱԿՈՎԱ ԽԱՆՂԵՑԻԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ՎԱՐԴԱՆ ԳՈՎԱՐ ԽԱՆՂԵՑԻԱՆ ԵԱՆԴԻՄԱՌԱՒԻՔԻՆ

#### ԿՐՈՊՈՎՈՒԹ

ԺՄՊՀ Պատմագիտական 1968, թ. 7-12 բացակիցն.

#### ՎՃԵՑԻԿ - Ս. ՂԱԶԱՐ

1969

ԺԲ—ԺԳ դր. Կիլիկյան Հայաստանի  
պատմական միջավայրում, որ գործում էր  
նաև Վարդան Ազգեկուս, թեև Երերին և բա-  
ղարական պայմանները տարբեր էին՝ կենտ-  
րունական Հայաստանից, սակայն հայերի  
դեմ ողջված դավանարանական պայքարը  
շարունակվում էր բուն կերպով, միայն այն  
տարբերությամբ որ այդ պայքարի գոյսն էր  
անցել բյուզանդականից փոխարիներու և-  
կած՝ Բոունական եկեղեցին: Տիրող այդ ի-  
րարդության պայմաններում է, որ Վարդանը  
ստանձնում է խիստ պատասխանատու մի  
պարտականություն՝ գրել իր «Հայատար-  
մատ»-ը: Նա այդ առթիվ երկարորեն ու-  
սումնափրություն է հայ և օստար մատենագիր-  
ների դավանարանական ժառանգությունը,  
հայ Անդիմակների կողմից զանազան առիթ-  
ներով գրված թղթերը և այլն: Վարդանը իր  
միջատակարանում նետվայ կերպ է մկարա-  
գում իր կատարած աշխատանքները.

«Անձկութեամբ և մեծ սիրով հասատոյ, յուսանիլն մեր զատուածաշոնց կուակարան, հաւաքեցի զայս աստուածաբնակ տառս ընդդեւ երկարնակաց և ամենայն հերձուածղաց, որ և գունէի վկայութին ի նորք գիրս և մեկնիչս կամ ի թուստ գիրս և կամ ի հաւաքման սրբոց հայրապետաց և բարեփառ հարցն մերոց, զոր արարեալ են ընդդեւ ամենայն հերձուածղացն»<sup>5</sup>:

Վարդանը իր մետագոտությունների ընթացքում հատկապես պրատել է Հռոմելիայի կաթողիկոսարանի մատենադարանը. «Ուր գտաք, —գրում է նա, —ծողովինալ զհաւաքնան գիրս և թուստու սրբոց հայրապետաց և մաքրափայլ վարդապետացն Հայոց զոր արարեալ են ընդէմի մերձուածղացն»<sup>6</sup>: Վարդանը իր որոնումների ընթացքում ձեռագրերից ծաղկաբաղ է արել օտար և հայ մատենագիրների աստյաները՝ «սուանց աւելորդ բանի», ինչպես գրում է նա: Եվ վերջ ավարտին հասցնելով իր «Հաւատարմատ»-ը, նու լավագոյն կերպով գիտակցու էր, թե ի՞նչ նշանակություն կարող է մենամալ իր այդ երկը տվյալ ժամանակաշրջանի պատմական բարդ իրադրության պարմանելում: Վարդանը այդ մասին գրել է մետևայ նշանակալից տողերը՝ ուղղված ընթերցողին. «Են արարի քեզ առ ձեռն պատրաստ զեն, ո՞վ սիրելի, ընդէմ թերավարծ երկմիտն քննողաց, քանզի խոցիր բոգիս տրժամ սիրողը բաժանման տգիտաբար խօսեին վասն երկու բնույթեան և կամ վասն այլոց խորհրդոց, և այս ես ձեռնարկել մեջ յայս բան, որ ի վեր է բան զկար մեր»<sup>7</sup>:

Վարդանի կանչառաւեստմները իր աշխատության կատարելիք դերի մասին՝ ի զուր չանցան: Նրա երկը նզոր գեներ դարձավ հայ եկեղեցու և հայ ծողովորդի ձեռքին ընդդեմ օտարութի թշնամական սադրանքների և լուսաբնու ուղեցուց՝ վերջիններին ազդեցության տակ ընկած որոշ բնով հայերի համար: Նրա լավագոյն ապացույցն է հանդիսանու այն մեծ ընդունելությունը, որին «Հաւատարմատ»-ը արժանացել է իր ժամանակին: Վարդանը, գոհացում տալու համար իր երկասիրության նկատմամբ ցուցաբերվող մեծ հետաքրքրությանը, ստիպվել է կարճ ժամանակում 12 անգամ այն ընդօրինակել և տարածել մի բան, որը խիստ ուշագրավ երեւոյց է նաև հայ գրչության պատմության մեջ: Վարդանը միաժամանակ թելադրել է ուրիշներին և՛ տարածել այն: Հիշյալ գործի

գուած ընդունելության լավագոյն ապացույցն են նաև այժմ «Հաւատարմատ»-ի տարրեր օրինակների սուկայությունը ինչպես Հայատանի, այնպես էլ արտասահմանի ձեռագրատներում: Անասյանը նշում է մոտ մեկուկես տասնյակ լրիվ և կամ թերի օրինակներ:

Վարդանի հիշյալ աշխատության ունեցած պատմական նշանակությունը և արժեքը լավագոյն կերպով է ընորոշել մեղմականից և նրա հովանակոր Պաղտին իշխանը, որը Վարդանին ուղղած իր թղթում գրել է. «Եւ ես ուրախացաք վասն գրու՝ զոր առաքեցեր առ մեզ. զի արմատ է սա հաւատոյ և գործարան ամենասորք Երրորդութեանն որով լուսատրեցաք նոգու և մարմնով, և պայծառագոյն իմացաք ի սման է մեծ և աստուածային խորհրդածությնս»<sup>8</sup>: Վարդանի սույն գործը իր թարմությունը և նշանակությունը չի կորցնուն նաև մետագա ժամանակներում, անգամ հայերի հայրենի սովորությունների դեմ ծառացող օտար ուժերի համար: Ավելորդ չի լինի նշել այս առջիվ, որ քաղկեդոնականների կողմից հայերի դեմ ուղղված ամրաստանությունների շարքում, որպես «սուլորություններ» պարունակող, հայերն 18 գրքերի ցուցակի երկրորդ տեղում նշվում է «Հաւատարմատ»-ը<sup>9</sup>: Հայ եկեղեցու և հայ ծողովորդի հակառակորհների կողմից դեռևս 14-րդ դարի կեսին Վարդանի այդ աշխատության հիշատակությունը առաջնակարգ տեղում ցույց է տալիս, թե այն ինչպիսի նզոր զններ էր դարձել հայերի ձեռքում քաղկեդոնական քարոզչության դեմ:

Վարդանի սույն գործի նշանակությունը փաստող մի կարևոր տվյալ է նաև երկարակների կողմից գրված մի այլ «Արմատ հաւատոյ»-ի գոյության ապացուցումը Անասյանի կողմից<sup>10</sup>: Այդ մասին խոսվում է 1806 թ. Գրիգոր Անավարդեցի կաթողիկոսի կողմից Հեթում Բ-ին ուղղված հայտնի թղթում, որ հրատարակել է լատին քարոզիչ Կողմեւ Գալանոսը<sup>11</sup>: Անասյանը փաստարկում է, որ այն գրված պետք է լինի ԺԳ դարի երկրորդ կեսին, այսինքն Վարդանի «Արմատ հաւատոյ»-ից շուրջ կետ դար հետո: Երկարնյա «Արմատ հաւատոյ»-ի երկումը մի անգամ ևս պացուցում է, թե ինչպիսի խոչոր նշանակություն է ունեցել այդ ժամանակաշրջանում Վարդանի գրած ուղղափառ «Հաւատարմատ»-ը, որ նրա հակառակորդ-

<sup>5</sup> Տես Հ. Ս. Անապանի գրախովող աշխատությունը, էջ 9—10 (Մաշտոցան Մատենադարանի ձեռագիր № 3295, էջ 538ա):

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 9:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 38, ծանոթ. 153:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 37:

<sup>11</sup> Կ. Գալանոս, Միաբանության Հայոց սորք նկեղեցու ընդ մեծի սորք նկեղեցոյն Հռովմայ, նու. Ա, Հռոմ, 1850, էջ 435—440:

ները ստիպվել են նոյն անոնով աշխատություն ստեղծել միաբնակ հայերի դեմ պայքարելու և կամ անսեղյակ մարդկանց մոտ շփորոյթյուն ստեղծելու համար:

Նորահայտ աշխատոյթյունը, օտար և հայ բազմաթիվ հեղինակների մատենագրական վկայություններով, հաև աջրբուրագիտական մեծ արժեք է Անդրկայացնուն: Այստեղ ի հայու են գալիս մի շարք հեղինակներ, որոնց ինքնույթունը մեզ ամենու է, կամ այնպիսիներ, որոնց գործերը մեզ չեն հասել: Այսուղի վկայություններ կան ամենու մատենագիրներ Տեղեացրնոսից, Դակելից, Ալղիեսից և որիշներից: Նշենք նաև, որ Ապելես Քերտսնացու գործերից կատարված հայերն առաջմանույթունների մասին հայագիտությանը դարձյալ ոչինչ հայտնի չէր, մինչև Անասյանի կողմից Վարդանի հիշյալ աշխատոյթյան հայտնաբերումը<sup>12</sup>:

Վարդանն իր այս երկուս մի շարք վկայություններ է բերել նաև քաղվածարար և ոչ բատացի: Այդպիսիներից է, օրինակ, Արքահան կաթողիկոս Աղքաթանացու «Ո՞ հաւատոյ թղթէն Արքահամո եպիսկոպոսի» խորագիր տակ քերպած հատվածը, որն ամբողջությամբ պահպանվել է «Գիրք թղթոց»-ում<sup>13</sup> և համառոտ՝ Ուխտանես պատմի մոտ<sup>14</sup>, «Ծովոյ շրջագայական» վերեագրով:

Վարդանն իր սույն աշխատության մեջ բազմաթիվ անգամներ վկայակոչումներ է բերել ոմն Անանիա Վարդանությունից: Անասյանը կարծում է, որ այդ քաղվածքները կատարված են Անանիա Սահմանեցուց<sup>15</sup>: Հարցը մեզ համար հետաքննելի է մնում, քանի որ Նարեկա վանքի և դպրանցի հիմնադիր Անանիա Նարեկացին առաջինն էր, որ, ըստ իր աշակերտ՝ Ուխտանես պատմի հավատի վկայության, գրեց երկարնակների դեմ մի աշխատություն՝ «Հաւատարման» անունով, և այն Անդրկայացրեց Խաչիկ Ս. կաթողիկոսին<sup>16</sup>, ամենայն հավամականությամբ 973 թ. և որը սակայն այժմ կորած է: Վերջերս բազմավաստակ ձեռագրագետ Տ. Նորայր նախակ. Պողարյանն իր «Հայ գրողներ Ե—Ժ» արժեքավոր հատորում նշում է Երրուաղեմում պահիղ մի ձեռագրի մասին, որը Անանիա Նարեկացու «Ընդդէմ երկարնակաց» ծավալուն գործն է և բնում է, որ

<sup>12</sup> Հ. Ա. Անասյան, Հայկական Մատենագիտություն, Ա, էջ 1089:

<sup>13</sup> Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 192—193:

<sup>14</sup> Ուխտանես եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Բատված Բ, Կանարշապատ, 1871, էջ 132—136:

<sup>15</sup> Տես Անասյանի գրախավոր աշխատությունը, էջ 33, Վարդանի սույն աշխատության մեջ վկայակոչուղ հեղինակների ցուցակը:

<sup>16</sup> Ուխտանես եպիսկոպոս, Ա, էջ 11:

Անանիա Սահմանեցին օգտված լինի նրանց, քանի որ վերջինիս «Հավամատութեան» մեջ կան համանակն շատ հատվածներ<sup>17</sup>: Հետագայում Վարդանի սույն նորահայտ գործում գտնվող ունի Անանիա վարդապետի վկայությունների համեմատությունը մի կողմից Անանիա Սահմանեցու և մրց կողմից Երրուաղեմի հիշյալ գրչագիր մետ կարող է կարող հշանակություն տնտեսակ Անանիա Նարեկացու կորած աշխատությունը ի հայությունը գործում: Անդրածեսու է նշել, որ Վարդանի «Արմատ հասառոր»-ի սղբությունը մետապատճեն հարցությունը թարգմանությունների մասին հայաց արժեքավոր գյուտներ կարող է ընձեռնել հայ մատենագիտության և առհասարակ հայ աղբյուրագիտության համար:

Անասյանը իր նորահայտ ցյութերը ներկայացրել է Մաշտոցյան Մատենադարանի № 3295 և № 8556 ձեռագրերի հիմնա վրա: Տրված են նաև այդ գրչագրերի նկարագրությունները: Հեղինակին ցարդ հաջողութեալ է գտնել «Արմատ հասառոր»-ից 7 ձեռագիր օրինակներ (Մաշտոցյան Մատենադարանի №№ 3295, 512, 1982, 4425, 6567, 7255 ձեռագրերը և Մարտեցրությունը մի գրչագիր), որոնցից սակայն ցարդ հայունի ամենալիրիվ միակ օրինակը 3295 համարը կորդ ձեռագիրն է: Ձեռագրերի այս հումքը Անասյանը հայությունը որպես ընդարձակ խմբագրություն, քանի որ նրան հայտնի է նաև մի երկրորդ խումք և, որ նա անվանում է համառոտ խմբագրություն և որից մի շարք օրինակներ են գտնվում Երևանի, Վիճանայի, Արմաշի (այժմ անհայտ կորպած), Վանեւտիկի և Հոռոմ մատենադարաններում: Հիշյալ երկու տարբեր խմբագրությունների մասին անցրայում կարաւատ եսխիս. Տեր-Մկրտչյանը այն կարծիքն է հայտնել, որ դրանք դավանաբանական տարրեր ժողովածուներ են. այն ինչ, ինչպես այժմ ապացուցվում է, դրանք միևնույն ժողովածուի տարրեր խմբագրություններն են:

Ոչ պական ուշադրության արժանի է նաև Անասյանի կողմից Մաշտոցյան Մատենադարանում № 8558 ձեռագրի հայտնաբերությունը, որպես Վարդան Ալեքեցու երկերը պարունակող ժողովածու: Սույն գրչագիրը արժեքը շատ ալելի է մնանաւում, եթե նկատի ունենակը այն հանգամանըը, որ, ինչպես արդեն ասվեց, այն ողովակի ընդօրինակված է Ալեքեցու ինքնագիր օրինակից և միաժամանակ պարունակում է հեղինակի հիմնականուն անհայտ մի շարք գործները: Դարձյալ վերոհիշյալ այդ ձեռագրում եղող նյու-

<sup>17</sup> Նորայր եպիսկոպոս, Պողարյան, Հայ գրողներ Ե—Ժ: ուար, Երևանակ, 1971, էջ 151:

թերից են գրախոսվող աշխատության մեջ հրատարակված՝ Այգեկցու երկու փոքրածավալ գործերը։ Դրանցից առաջինը կրում է «Հասն անիրա բամբասդաց և կեղեցւոյ Հայաստանաց» խորագիրը և համարվում է «Արմատ հաւատոյ»-ի ավարտման ժամանակակից։ Սնասայնը գտնում է, որ սույն գրվածքը կոչված է ավելի լուսաբանելու այն խնդիրները, որոնք ծնունդ են տվել «Արմատ հաւատոյ» գրքին և վերաբերում են մոտավորապես ԺԲ դարի վերջերին և կամ ԺԳ-ի սկզբներին։ Սույն ընագիրը ևս գրված է հայրենի ավանդությունները պահպանելու շերմ ձգտումով և հիմնականում նիշրված է Հայաստանաց և կեղեցւոյ առարելական ծագմանը և նրա հիմքերի պաշտպանությանը։ Այն ուղղված էր բաղկեղունականությանը հարող հայերին, որոնք, գաղափար իւս չունենալով հայ ժողովրդի և նրա եկեղեցու դավանության մասին, բամբասդ էին, թե «Հայր տղէտ և վերջին ազգ են»։

Հրատարակվող երկրորդ բնագիրը մի ընդարձակ խոյս է «Հասն շատահաջ քննողաց խնդիմանութիւն» խորագրով, որը գրված է Դուսի (Տաւսի) ձորից, որ գտնվում էր Այգեկի վանքը և ուղղված էր ենոյնակի ծննդավայր Սարաթայի և նրա շրջակաների, այսինքն բոլանդակ Դլուր (Տլուր) գալաքտի հայ, հոյն և աստի բնակիչներին։ Իր այս թղթով Վարդանը հանդես է գալիս նրան իրեն ժողովրդականության շերմ ջատագով, խաղաղության ազնիվ պաշտպան և անկողմնակալ հաշտարար ոգի։ Նա բոլորուին հավասարապես հորդորում է վերջ տալ կրոնական վեճերին, այսինքն ժողովրդական միջն եղող դավանարանական երկառակություններին։ Անայնը սրանցից առաջ իր «Վարդան Այգեկին որպես համերաշխության գաղափարախուռ» նույնական անդրադարձ է այս կարևոր բնագիրի հշանակությանը և նրա ենթակացրած արժեքին<sup>18</sup>։

Ինչպես նշեցինք, Անասայնը իր սույն աշխատությամբ ոչ միայն երևան է բերել Վարդանի ցարու անհայտ մնացած աշխատությունները, այլև թանձնագիր լուցումներ է կատարել ենոյնակի կենսագրության վերաբերյալ։ Միթթարյան բազմավաստակ հայագետն Հ. Գ. Զարպիանալյանին, որն անցյալ դարի երկրորդ կեսին գրել էր իր «Պատմութիւն հայ հին դպրութեան» երկը, դեռևս անծանոր էր մնացել Վարդան Այգեկցու ինքնությունը։ Զարպիանալյանին ծանոթ է եղել միայն Վարդան Վարդապետ Մեծը, որը Վարդան Արևելցին է։ Իսկ ինչ վերաբերում է Վարդան Այգեկցու առակե-

րին և նրա այլ ստեղծագործություններին, դրանք դրված են Վարդան Մեծի անվան ներք, իբրև «մանր կամ անհարազատ գլուխածքներ»<sup>19</sup>։

Այգեկցին հայագիտությանը հայտնի դարձավ շնորհիվ ակադ. Ն. Մատի շամբերի<sup>20</sup>։ Սակայն վերջինս հիմնականում իր ուսումնասիրության հյուր դարձրեց Վարդանի առակները և միայն անցողակի կերպով անդրադապ նրա մի քանի այլ անտիպա գործերին։ Ականավոր ու մեծավաստակ հայագետներ Մանուկ Արեւյանն<sup>21</sup> ու Հրաչյա Անապյանը<sup>22</sup> իրենց աշխատություններում նորահայտ հյույսների բացակայության պատճեռով հարևանցիորեն միայն կարողացան ուրվագել Վարդան Այգեկցու կյանքն ու գործունեությունը։ Անապյանը Վարդան Այգեկցու անվան ներքո նշել է նաև՝ «Տես և Վարդան Տլուրեցի» (№ 70), որի տակ անշուշտ դարձրալ նույնինքն Այգեկցին պետք է հասկանալ։

Այսպիսով հայագիտության մեջ նախ Այգեկցին շիփումիվ էր Վարդան Արևելցու հետ և ապա հիմնականում խովել էր նրա առակների, ինչպես նաև նրա այգեկյան գործունեության շրջանի մասին (1210-ից հետո)։ Այժմ Անասայնի աշխատության շնորհիվ առաջին անգամ հայ բանահրությանը հայտնի է դատում Վարդանի կյանքի և գործունեության նաև նախայգեկյան շրջանը, որը, ինչպես ցոյց են տալիս փատական տվյալները, եղել է շատ ավելի բեղուն և հարուստ։ Այս ժամանակահատվածում է, որ Այգեկցին ի հայու է գալիս իրեն եկեղեցական, հասարակական մեծ գործիչ, որը կարելոր դեր է կատարել Կիլիկյան Հայաստացի կյանքում։

Նախ նշենք, որ Անասայնը առաջին հերթին կանգ է առել Այգեկցու հալածնան հարցի վրա, որը դեռևս անլուծելի էր մնացել հայ բանահրության մեջ։ Անասայնը ճշտում է, որ հիշյալ հալածնաքը տեղի է ունեցել 1205—1209 թթ. ընթացքում և ամենայն հավանականությամբ այն կարող էր արդյունք իններ Վարդանի «Արմատ հաւատոյ»-ով ծա-

<sup>18</sup> Հ. Գ. Զարպիանալյան, Պատմութիւն հայ հին դպրութեան (Դ—Ժ դար), չորրորդ տպագրութիւն, յանեղուածովք և փոփոխութեամբ, Վլմենիկ, 1982, էջ 785—745։

<sup>19</sup> Հ. Աբաղյան, Հայոց անձնանունների բառարան, բառոր Ե, Երևան, 1982, էջ 83—84։

<sup>20</sup> Հ. Գ. Զարպիանալյան, Հայոց անձնանունների բառարան, պատմության, գիրք Երկրորդ, Երևան, 1946, էջ 158—169։

<sup>21</sup> Մանուկ Արեւյան, Հայոց միայն գրականության պատմության, գիրք Երկրորդ, Երևան, 1946, էջ 158—169։

վաղած պայքարի, որն իր շատ կողմանով վերաբերում էր նաև նայ-ասորական միջավարին և շատ հնգամա ուղղված էր նաև այն-տեղ տիրող ասորական ազդեցության դեմ, հետևաբար նաև՝ այդ միջավայրում դիրքը ունեցող հայ տարրերի շամերի դեմ<sup>23</sup>:

Վարդանի վաղ շրջանի գործության մասին նորություն է նաև Անապանի կողմից ի հայութեաված այն ուշագրավ տվյալը, ըստ որի նա 1198 թ. նորիւ է եղել Առն Բ-ի թագաղողության համեմատին, տվյալ, որն ի հայութեաված գային վերոնիշավ «Վասն անհրաժեշտ բնութագործությաց» նորանայու գրիմաքրում: Անապանը սույն նորագրության տվյալից եղելով գունում է, որ դարձայ Այգեկցին պետք է լինի Սորան Սպարապետի տարեգործության մեջ նոյն թագաղողության համեմատին պաշտոնական ներկաների մեջ հիշատակվող «Տեր Վարդան՝ արքային կուսուր Լամբրոնին և առաջնորդ Ակնուու» կոչված անձը<sup>24</sup>: Մեզ թվում է, որ այս փաստն անստարկելի է և Վարդանը իր հախայգեկրան շրջանում եղել է նաև Համբրոնի արքային կուսուր և Ակնուու առաջնորդ:

Կենագրական հաշորդ ուշագրավ հայութեարումը վերաբերում է Վարդանի մինչայգեկրան շրջանում կրած մականուններին, քանի որ, ինչպես նշում նկատում է Անապանը, Վարդանը Այգեկցի կոչվեց Այգեկուն հաստափելոց մետք միայն: Նա Մատենադարանի №№ 728 և 1838 ձեռագրերի հիման վրա ապացուցում է, որ Վարդանը նախապես հայտնի է եղել նաև Բենին և Կիլիկիոյ մականուններով<sup>25</sup>:

Սակայն Բարգելի, Վաստակաշատ բանակերը իր հիշյալ բազմազան հայութաբերումներով բավարարպող չէ: Խնչակը իր կորողական գործի՝ «Հայկական մատենագիտության», այնպես էլ իր նոր ուսումնասիրության մեջ կատարում է իր նյորի նետ առնչվող՝ մի շարք աղավաղված կամ ցարդ անհմանայի մնացած բառերի կամ անունների բանահրական նորին և խիստ արժեքով նշգրտություն: Այդ շարքից առաջին մերօին արժանի է հիշատակության Վարդանի նորագրու «Հայտարմատ»-ում օգտագործված «Ձեր» և «ուրբաթազեր» բառերի հարցը և նրանց սուուգարանությունը, որոնց

Անապանը նվիրել էր հասուն հողմած<sup>26</sup>: Այդ բառերից առաջինը՝ «Ձեր»-ը, որը երկրորդի բաղադրիչ մասն է, բոլորովին ամենանոր է եղել հայերեն լեզվի անգամ ամենանորինականությունը բառարաններին (Նոր Հայկացան, Առնեան և Արմատական), իսկ երկրորդը, որը տեղ է գտել Վենետիկյան բառարաններում, աղավաղված էր «ուրբաթազեր» ձևերով և նիշու չեր բացատրված: Ի վերջո կողմանակի աղբյուրների միջոցով Անապանին հաջողված է ճշուել այդ բառերի ուղիղ ձևերը: Անապանի սուուգարանությամբ «Ձեր»-ը կապ ունի զերծել բայց նետ և նշանակում է «փափուում»: Հեղինակը այն բացատրում է նաև պատմականորեն: Այդեւու ժամանակաշրջանում հայ և ասորի եկեղեցիների միջև եղող կական վերերից մեջը վերաբերում էր պահի ժամերի խախտման հարցին, ուստի և հայերի կարծիքով «ուրբաթազեր»-ը պատմականուն նշանակում էր «ուրբաթ օրիւա պահի ժամերի խախտում», որը կատարվում էր ասորիների կողմից:

Շատ ավելի բազմազան և հարուստ են Անապանի ճշգրտումները 1841 թ. Ներևս Պալենցի կողմից Ավլիսինում կազմված գրացուցակի վերաբերյալ: Այս գրացուցակում թվարկված են 18 անուն հայերեն գրքեր, որոնք «Ժմորրական» էին համարվել Պալենցի և լատինական տառերով գրված և մեծ մասամբ աղավաղված անունների ուղղման աշխատանքներով առաջինը գրադիւ է Մաղարիա արքեպիսկ. Օրմանյանը: Ինչպես նշեցինք, սույն ցուցակի երկրորդ տեղում հիշվում է «Հայատարմատ»-ը աղավաղված հանածօրացմատ, որը Անապանի կողմից ճշտվում է իրու Վարդանի կազմած «Հայատոյ պրմատ»-ը: Հեղինակը բանահրական դիպուկ կուպումներով կարողանում է ճշգրտել մի շարք գրքերի անուններ ևս, որ Օրմանյանը իր ժամանակին չեր կարողացել պարզել: Իրեւ 8-րդ գիրը սույն գրացուցակում լատինական տառերով գրված էր աղավաղված ձեռերով՝ Octavensis, Toctanensis, Occipenensis<sup>27</sup>: որը Օրմանյանի կողմից ընթերցվել էր իրու Ուկտանցի կամ Տոկտանցի կամ Ուկենանցի և որ մա ամունելի էր համարել, ի վերջո գրելով՝ «Նահանգությամբ ճշտելն ալ դմվար»<sup>28</sup>: Այնինչ Ա-

<sup>23</sup> Հ. Ս. Անապանի գրախոսուող աշխատությունը, էջ 39—40:

<sup>24</sup> Ամբան Սպարապետի տարեգործին, Վենետիկ, 1865, էջ 110—111:

<sup>25</sup> Հ. Ս. Անապանի գրախոսուող աշխատությունը, էջ 41:

<sup>26</sup> Տես «Ձերեր հասարակ. գիտ.-ի», Երևան, 1969, № 8, էջ 78—81: Այդ մասին տես նաև Անապանի գրախոսուող աշխատությունը, էջ 29—31:

<sup>27</sup> Տես Հ. Ս. Անապանի գրախոսուող աշխատությունը, էջ 86:

<sup>28</sup> Մաղարիա արք. Օրմանյան, «Ազգապատում», Բն. Բ, Կ, Պոլիս, 1814, Տ 1806:

նայանը այն ճշգրտում է իրեն Ռիխտանես<sup>21</sup>: Անթրածից է Եշել, որ Ժ դարի հայ պատմի Ռիխտանեսի պատմության՝ «մերժված» գրքերի շարքում հիշատակվելն իշխապես, որ տեղին է, բանի որ ինչպես միջնադարում, այնպես էլ նոր ժամանակներում այդ աշխատությունը քաղկեդոնականների կողմից մերժված է եղել: «Պատահական չէ, որ Հովհաննես Դամավագու միջնադարյան հայ քաղկեդոնական խմբագրող նախատական տողեր ունի ողղված Ռիխտանեսի հասցեին»<sup>22</sup>: Նոյն լատիներնեն ցուցակում իրեն 13-րդ գիրը Եշված է Նառամ, Քառամ, Վառամ<sup>23</sup> ձևերով մի աշխատություն, որ Օրմանյանը հակիմ է ուղելու իր «Վահանի մեկնություն» Հովհաննեսու, որ Պանական կամ Վարդան վարդապետ պիտի ըլլա, թեպես Հովհաննեսու մեկնություն գրած ըլլալնին հարտենի չէ»<sup>24</sup>: Անապանը այս ևս մեծ հաջողությամբ ճշգրտում է իրեն Նանա, այսինքն Նանա Ասորու «Մեկնություն» Յովհաննեսու աւետարացին»<sup>25</sup>: Նոյնպես գրացուցակի 17-րդ գիրը, որի լատինատառ սղավաղված հայերները կարդացվում է իրեն Տետօցութե. Տետօցուն<sup>26</sup> և որը Օրմանյանի կողմից ընթերցվում է իրեն Տեքստորկեր կամ Տեքտորգումտ Յուա մասին անորոշ կերպով գրում է Օրմանյանը՝ «Գիրը խնչուից թարգմանված, ճշելու դրվար»<sup>27</sup>: այս ևս դարձալ հաջողությամբ ճշգրտվում է Անապանի կողմից մետեղալ ձևութեալ: Նկատի ունենալով, որ այն թարգմանված է իրեն Լիեր ըրտուղարու և առողքելով հայ լատինատառ հայերենով գրված աղավաղումները, ճիշտ կերպով գտնում է, որ այն «Թղթոց գիրը»-ն է<sup>28</sup>: Ճիշտ ճշտումները կարևոր Եշանակություն ունեն ինչպես ընթանուր հայ մատենագրության, այնպես էլ հիշյալ գրքերի պատմության համար:

<sup>21</sup> Հ. Ս. Անապան, Եշված աշխատությունը, էջ 36:

<sup>22</sup> «Ըստ», Կ. Պոլիս, 1906, էջ 357, 475:

<sup>23</sup> Հ. Ս. Անապան, էջ 36:

<sup>24</sup> Մ. արք. Օրմանյան, «Ազգապատում», նոյն տեղում:

<sup>25</sup> Հ. Ս. Անապան, էջ 36:

<sup>26</sup> Հ. Ս. Անապան, էջ 36:

<sup>27</sup> Մ. արք. Օրմանյան, «Ազգապատում», նոյն տեղում:

<sup>28</sup> Հ. Ս. Անապան, էջ 37:

Ուշագրավ են նաև Վարդանի կյանքի ու գործունեության ներև կապված մի շարք տեղաբնեների մասին կատարված Եշուումները: Նախ ճշուվում է Այգեկի տեղը. Թիշատակարանների օգտությամբ ապացուցվում է, որ այն օւնակի է Դուսի (Տասիս) կոչված ձորում, իսկ Այգեկն ու Դուսիս գտնվում էին Սուրբ Յեղափոխության, որոնք ավելի են հայունի Սրբ Խոնակը ամուսությունը<sup>29</sup>: Ծշուվում են նաև Մարտան և Դուռը, որը է հայտնվում Վերին Մարտան տեղանունը<sup>30</sup>:

Եղակացությունն: Ներհուն բանասեր Հ. Ս. Անապանի սոյն աշխատությունը կարևոր ներդրում է հայ մատունագրության պատմության համար: Դրա շնորհիվ այժմ Վարդան Այգեկցին, իր ամրուշ հասակով կրնան, ի հարս և գայիս մար միջնադարի երաժառավորների շարքում. նա այժմ արդեն ունենալու է իր կենսագրությունը և իր արժանի տեղն է գրավում նայ գրականության պատմության մեջ: Նա խոշոր ստակագիր լինելուց բացի այժմ հայունի է դառնում նաև իր համանակին մեծագույն հայ եկեղեցական, հասարակական և մշակութային գործիքներից մեկը: Վարդանը կարևոր նպաստ է թերեւ իր ծամանակին նուզվող դավանաբանական հարցերին և, պայքարելով լատինամու նուանքի դեմ, դարձել ազգային հնքնուրության համար պայքարող հայ կարկանդակ դեմքերից մեկը: Այժմ մեզ մնում է ցանկանալ, որ բազմավաստակ հայագետն Հ. Ս. Անապանը իր խոստման համաձայն լոյս ընծայի նորահայտ «Հատարամառ»-ի ընձական բնագիրը՝ ուսումնասիրությամբ հանձնեած, այսպիսով հայագիտությանը վերլուսին ընծայելով կորսայան մատնեած արժեքավոր երկերից մեկը: Այս Եշանակը դրծը իր հասուն տեղն է ունենալու «Կիրք թղթոց»-ի, «Կիրք հաւատոյ»-ի, Տիմոթեոս Կուզի «Հականառութիւն» երկի և հմանենի շարքում: Հաջողության շերմագին մատուցներ հայագիտության վաստակավորին սոյն ծանր աշխատանքը ևս իր անհնան «Հայկական մատունագիտության» ներև միայն ավարտին հասցնենու հնամար:

## ՍՈՒՐԵՆ ՔՈՂԱՆՉՅԱՆ

<sup>29</sup> Նոյն տեղում, էջ 6—8:

<sup>30</sup> Նոյն տեղում, էջ 15, ծանր. 28:

